Հրանտ Մաթևոսյան

Ինքնանկար

- Կենդանակերպի Ձեր նշանը:
- Ջրհոս:
- Դուք հավատացյա՞լ եք:
- Ես լուսավոր մենատների, մաքուր այգիների, առողջ երեխաների, հմուտ բանվորների, գիտակ բժիշկների, անպիղծ բանաստեղծների երկրին եմ հավատում:
- Ձեր ծնողները հավատացյա՞լ են:
- Իմ ծնողները գյուղացի հայ մարդիկ են՝ մի օր հավատացյալ են, երկու օր՝ ոչ:
- Ձեր սիրած կենդանին:
- Մի ժամանակ ընկերներիս խնդրում էի, որ նկարեն գառը, ուլը, հորթը, քուռակը, փոքրիկ ծառը, կողքին՝ փոքրիկ տղան:
- Ձեր սիրած եղանակը:
- Վաղ գարուն՝ մայիսի սկիզբը, մաքուր, լիքը աշունը:
- Ի՞նչ խենթություններ ունեք:
- Խենթություններ չունեմ, ինքնավերահսկումը միշտ կա. խենթերին չեմ սիրում:
- Ձեր արտաքինը Ձեզ դո՞ւր է գալիս:
- Իմ արտաքինը ինձ դուր չի եկել: Դրա համար էլ այն փորձել եմ սրբագրել գրականությամբ:
- Ձեր կյանքում եղե՞լ է որևէ ցնցող դեպք:
- Մի այդպիսի դեպք եղել է, բայց դա չի կարելի դեպք համարել, որովհետև արդեն մի քանի տասնամյակ է այդ դեպքը շարունակվում է. դա իմ ամուսնանալն է:
- Դուք երջանի՞կ մարդ եք:

- Երջանիկ եմ այնքանով, ինչքանով մի երկու անգամ գրականության աստծո երեսը տեսել եմ:
- Կյանքից հրաժարվելու ցանկություն ունեցե՞լ եք, սիրո՞ւմ եք կյանքը:
- Եթե քաջ եղած լինեի, պետք է որ վաղուց հրաժարված լինեի, բայց դուք կմնաք անտեր: Վախենամ, որ կմնաք հովիվը կորցրած ոչխարի հոտ, որին գայլը կուտի: Գուցե սա ինքնախաբեություն է կամ գուցե ես ինչ-որ դեր եմ ստանձնում՝ որպես մահից խուսափող մարդ...
- Ի՞նչ է գրականությունը Ձեզ համար:
- Գրականությունը ինձ համար դավանանք է:
- Ո՞րն է գրականության հաստատած ճշմարտությունը:
- Գրականությունը Աստծուն բերել, տեղադրել է մարդու մեջ:
- Ի՞նչ եք մտածում գրականություն և գաղափարախոսություն փոխհարաբերության մասին:
- Ինչպիսի գաղափարախոսության պիտի հարի գրո՞ղը. եթե ազգայնական է՝ գրականություն չի, եթե կոմունիստական է՝ գրականություն չի, եթե հումանիստական է՝ քաղցրալորձ է, եթե բուրժուական է՝ գրականություն չի, եթե հարող է՝ գրող չի, այլ քարոզիչ: Գրողից պահանջվում է միաժամանակյա ներկայություն թվարկված և դարձյալ շատ ու շատ կետերում...
- Ո՞րն է այսօր գրողի առաքելությունը:
- Ժամանակը ընթերցելու լեզու ստեղծելը:
- Ո՞րն է Ձեր գրականության առավելությունը: Ի՞նչն էիք ուզում փոխել աշխարհում, որ փոխվեց կամ չփոխվեց:
- Ուզում էի Հայոց երկրի համար ավետարան գրել:
- Ինչի՞ց կուզենայիք փրկել ծմակուտցի և ոչծմակուտցի մարդուն:
- Հավակնոտ այն մշակույթից, որ բանակներ է գումարում, իր իդեալները զենքով տանում ուրիշի երկիրը, փաթաթում մարդկանց վզին, կարծես մարդուց էլ մեծ իդեա կա: Հիշենք և նզովենք Ալեքսանդր Մակեդոնացուն, Նապոլեոնին, Հիտլերին: Սարսափելի բան է, երբ այդ համաճարակային «իդեաները» մեծ ազգերի մեջ են բռնկվում...
- Ի՞նչ ասել է ճշմարիտ գրականություն:
- Եթե կարդում եք ու ասում՝ սա իմ մասին չէ, այլ՝ հարևանիս, նշանակում է գործի ճշգրտությունը մոտավոր է:
- «Արվեստը արվեստի համար». կա՞ այդ սկզբունքը՝ մաքուր արվեստը:

- Երբ արվեստը արվեստի համար է՝ միայն այդ դեպքում է դառնում մարդու համար:
- Ո՞վ է հայը:
- Չի ընկնում մինչև հատակը և չի բարձրանում ամենավերևը: Այդ մարդն է հայը:
- Տիեզերքի մասին:
- Տիեզերքի սահմանը մեր խելագարությունն է:
- Իսկ անսահմանությո՞ւնը:
- Անսահմանությունը մեր անզորությունն է:
- Ձեր հարցը Ձեզ:
- Ա՛յ Հրանտ, բոլոր կոնյակներդ խմել ես, բոլոր վայելքներդ ապրել ես, աշխարհից ի՞նչ ես ուզում: